

## ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐ «ԼՈՌԻ - ԱՐՑԱԽ»

### ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Ելնելով մշակույթի համաչափ զարգացման մասին ՀՀ կառավարության հիմնական գերակայություններից՝ կարևորվում է Լոռու մշակույթի ներկայացումը արցախահայությանը, ինչպես նաև հյուսիսային Հայաստանի և Արցախի ազգագրական, ծիսական առանձնահատկություններին երկկողմանի ծանոթությունը: Միջոցառման անցկացման նպատակով արդեն 2008 թվականից Լոռու մարզից Մարտակերտ են մեկնում մարզի մշակութային լավագույն համույթներ, անհատ կատարողներ, նկարիչներ, գրողներ, դերասաններ՝ ընդհանուր թվով շուրջ 35 մասնակից: Հանդիպում համերգները տեղի են ունենում Մարտակերտի մշակույթի պալատում: Միջոցառմանը ներկա են գտնվում շուրջ 300-400 հանդիսատես:

#### **Ծանոթություն.**

#### **2013թ. հունիսի 27-29**

Լոռու մարզի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարտակերտի շրջանի միջև բարեկամական կապերը սաղմնավորվել են դեռևս 2008թվականից: Հետագա տարիների այցելությունները, իրականացվող համատեղ ծրագրերը վկայեցին, որ երկու մարզերի միջև բարեկամությունը տարեցտարի առավել խոր արմատներ է ձգում ու շարունակվելու է երկար տարիներ՝ ավանդույթը փոխանցելով գալիք սերունդներին:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում «Լոռի Մարտակերտ, բարեկամության կամուրջներ» հերթական այցելությունը՝ Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի գլխավորությամբ կազմակերպվել է 2013թ հունիսի 27-29-ը:

Այդ համընկավ Մարտակերտի ազատագրման 20-րդ տարելիցին նվիրված տոնակատարությունների հետ: Ա. Նալբանդյանը պատվիրակության մի քանի

անդամների հետ մասնակից դարձավ մարտակերտի ազատագրման 20-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին:

Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանի կողմից Մարտակերտի նորաբաց մարզադպրոցին նվիրաբերվել է ըմբշամարտի մարզահագուստ՝ վարչական շրջանին համակարգիչ: Պատվիրակության անդամները հնարավորություն ունեցան լինելու Գանձասարում, Տիգրանակերտի քաղաք-թանգարանում, Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում, «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ-ին պատկանող Դրմբոնի լեռնահանքային համալիրում:

Լոռու մարզպետը արժևորել է «Վալեքս» ընկերության մեծ ներդրումը հայկական երկու երկրների արդյունաբերության զարգացման գործում:

Ա.Նալբանդյանը «Վալեքս» խմբի ընկերությունների փոխնախագահ, «Բեյզ Մեթրլս» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արթուր Մկրտումյանին պարգևատրեց Լոռու մարզպետի Ոսկե հուշամեդալով:

Եռօրյա այցից հետո պատվիրակությունը վերադարձել է հրաշալի տպավորություններով, լցված հայրենասիրությամբ և վստահ, որ հայրենիքի փառավոր անցյալն առավել փառավոր ապագա է խոստանում:

## **2012թ. Հուլիսի 28-29**

### *Լոռու մարզի պատվիրակության այցը Արցախի Մարտակերտի շրջան*

Հուլիսի 28-29-ին Հայաստանի Հանրապետության մարզերի և Արցախի Հանրապետության վարչական շրջանների միջև տնտեսական և մշակութային կապերի խորացման ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ Լոռու մարզի պատվիրակության հերթական այցը Արցախի Հանրապետություն: Ծրագրի շրջանակներում Լոռու մարզն ու Արցախի Մարտակերտի շրջանն արդեն մի քանի տարի իրականացնում են «Լոռի-Մարտակերտ. բարեկամության կամուրջներ»՝ խորագրով տարբեր միջոցառումներ: Պատվիրակությունը, որի կազմում էին մարզային տարբեր կազմակերպությունների ղեկավարներ, մտավորականության ներկայացուցիչներ, «Վալեքս» խմբի՝ Հայաստանում գործող ընկերությունների աշխատակիցներ, ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի գլխավորությամբ և Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջանի հոգևոր առաջնորդությամբ նախ այցելեց Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցի, որտեղ տեղի ունեցավ մոմավառություն և ընդհանրական աղոթք: Այդուհետ պատվիրակությունն ուղևորվեց Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտ: Պատվիրակության անդամներին ընդունեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Հանդիպմանը մասնակցում էին

նաև Արցախի Հանրապետության կառավարության անդամներ, «Վալլեքս» խմբի «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք: Նախագահն իր խոսքում նշեց, որ Հայաստանի մարզերի և Արցախի շրջանների միջև կապերի շարունակական խորացումն ու ընդլայնումն օգտակար է երկու հայկական հանրապետությունների համար և կարևոր՝ ներհայկական կապերի ամրապնդման տեսանկյունից: Այս համատեքստում Բակո Սահակյանը բարձր գնահատեց Լոռու մարզի ներդրումը՝ հավելելով, որ Լոռի-Մարտակերտ համագործակցությունը նկատելի ազդեցություն է գործում վերջինիս սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Քննարկվեցին նաև երկու հայկական պետությունների կենսագործունեության տարբեր ոլորտներին առնչվող մի շարք հարցեր: Նախագահի մոտ պաշտոնական ընդունելությանը հաջորդեց Ստեփանակերտի մշակույթի կենտրոնում լոռեցիների ու արցախցի արվեստագետների մասնակցությամբ համատեղ միջոցառում, որին ներկա էին ԼՂՀ վարչապետը և մշակույթի նախարարը: Այցելության առաջին օրն ավարտվեց Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատի դահլիճում կազմակերպված մշակութային միջոցառումով: Լոռու մարզի պատվիրակությանը ողջունեցին և համագործակցության խորացմանն ուղղված ծրագրերը կարևորեցին Արցախի Հանրապետության վարչապետ Արա Հարությունյանը, Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը, Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը, «Վալլեքս»՝ խմբի ընկերությունների նախագահ Վալերի Մեջլումյանը, «Վալլեքս» խմբի ընկերությունների փոխնախագահ, «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ գլխավոր տնօրեն Արթուր Մկրտումյանը, Արցախի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը: Համերգային մասի շրջանակներում ելույթ ունեցան Ստեփանակերտի պարի պետական համույթի սաները, երիտասարդ քանոնահար, «Դասական Եվրատեսիլ-2012» մրցույթի մրցանակակիր Նարեկ Կազազյանը, «Մանկական Եվրատեսիլ-2010»-ի հաղթող Վլադիմիր Արզումանյանը և այլ շնորհալի արտիստներ: Միջոցառումը եզրափակվեց Վանաձորի Հովի. Աբեյանի անվան պետական դրամատիկական թատրոնի՝ Հովի. Թումանյանի հեքիաթների մոտիվներով բեմադրության ցուցադրությամբ: Այցի երկրորդ օրը Լոռու պատվիրակությունը մեկնեց Մարտակերտի շրջան: Պատվիրակության մի մասն էլ այցելեց հրաշակերտ Գանձասար: Շրջկենտրոն Մարտակերտ քաղաքում պատվիրակությանն ընդունեց շրջանի վարչակազմի ղեկավար Լևոն Չալյանը: Մարտակերտի հացամթերքի բազաներից մեկում գործարկվեց Լոռու մարզի կողմից Մարտակերտի շրջանին նվիրված՝ սերմացուի զտիչ-ախտահանիչ սարքավորումը: Մեր մարզի պատվիրակությունը Մարտակերտի վարչական շրջանի ղեկավարությանը նվիրեց նաև անհրաժեշտ գրականություն և լոռեցի նկարիչների աշխատանքներ: Մարտակերտի մշակույթի տան դահլիճում, ուր հանդիսատեսի զգալի մասը Մարտակերտի կայազորի զինծառայողներ էին, տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում, որից հետո պատվիրակության անդամները հարգանքի տուրքի այցով եղան Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշահամալիրում և ծաղկեպսակ դրեցին հուշարձանին, եղան նաև ազատամարտի թանգարանում, այնուհետև Մարտակերտի մշակույթի պալատում հավաքված հանդիսականի և զինվորների ներկայությամբ վարչակազմի ղեկավարը ողջունեց հյուրերին, ապա մեր պատվիրակության մի քանի անդամներ պարգևատրվեցին նրա կողմից: Ելույթ ունեցան մարզպետ Արթուր Նալբանդյանը, Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը: Մարտակերտ ժամանած հայրենակիցների հետ

հանդիպման էին եկել նաև լոռեցի գինձառայողներ: Պատվիրակությունն այցելեց նաև Դրմբոնի լեռնահանքային համալիր, որտեղ տրված պատվո ճաշկերույթին մասնակցում էին նաև 'Բեյզ Մեթրլս' ՓԲԸ-ի հովանավորությամբ արդեն երկրորդ տարին Ստեփանակերտում անցկացվող քանդակագործության միջազգային սիմպոզիումին մասնակցող իտալացի քանդակագործներ: 10-րդ դարում լոռեցի մի քանի մեծատոհմիկներ եկան Արցախ և հիմնեցին Արցախի մելիքությունները: Բայց ուղիղ տասը տարի առաջ Արցախ եկան լոռեցի հանքագործները, «Վալլեքս» խմբի ընկերությունների կողմից հիմնադրվեց «Բեյզ Մեթրլս» ընկերությունը: Ներկայում էլ «Բեյզ Մեթրլս» ընկերությունը Լեռնային Ղարաբաղի ամենախոշոր հարկատուն է և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունը: Հայաստան-Արցախ, Լոռի-Մարտակերտ բարեկամության կամուրջը հիմա ամուր է նաև շնորհիվ 'Վալլեքս' խմբի ընկերությունների: Լոռի վերադարձի ճանապարհին պատվիրակությունը եղավ նաև Դադիվանքի վանական համալիրում: Դադիվանքում լոռեցիներն աղոթք բարձրացրին Հայ Առաքելական եկեղեցու սրբերից մեկի՝ Դադիի գերեզմանին, իսկ թեմակալ առաջնորդն իր հուզիչ խոսքով ամփոփեց այցելություն-ուխտագնացությունը: Մեր զրույցի ժամանակ Արթուր Նալբանդյանն ասաց, որ առաջիկայում Լոռում կլինեն նաև ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը և Մարտակերտի շրջանի պատվիրակությունը: